


891.99

U-40



391.542-1

U-39



אֱלֹהֵינוּ יְהוָה

וְיֵשׁוּעַ מְלִיכָא

1918

ՀՐԱՏ. Ս. ԳՕԼԼՍԹԵԱՆԻ

19 NOV 1911

891.99-1
U-40"

ՍԷՆ-ԳԱՌ

1001
3732

Մ Ր Մ Ո Ւ Ն Ջ Ն Ե Ր



ԹԻՖԼԻՍ

Տղ. «ՍԼՕՎՕ» Գիմնադիչեկայա № 1

1918 թ.

30 JUL 2013

54395

ԵՐԿՈՒ ԽՕՍԷ

Ջերմապէս ու լիաբուն ցանկութիւն ունե-
նալով սկսնակ պատանու սրտաբուլիս և
գունեղ Հիւսաճքների հաւաքածոյ սոյն
գրքոյկի հրատարակելը, հեղինակից ան-
կախ, ես կանգ չառնելով ներկայիս ծանր
պայմանների հանդէպ՝ հրատարակեցի:

Եւ լիայոյս եմ, որ սուպարիզում ուշադիր
ու ներողամտաբար կը վերաբերեն նո-
րաբողբոջ հեղինակի ըայլերին:

Ս. ԳՕՎԼԱԹԵԱՆ

Մ Ա Ր Ա Մ Յ Ո Յ Ս Ե Ր

Է՛յ մարած յոյսեր, իմ աննշած յուշեր,
Նորից արթնցրէք, սգին սյժ առէք.
Բոցավառ կրքիս դուք աղօտ կայծեր,
Գուրգուրող քնքոյշ սէր ինձ ներշնչէք:

Ա՛խ, զիւժիչ երազ, կեանքիս լուսատու,
Ապուլւնից առ երգ, տաւիղ, քնանր,
Երգիւք, փայփայիւք, հոգիս խոցոտած,
Ու լուռ աղօթիւք իմ մեղքիս համար:

Է՛յ, մարած յոյսեր, չքնազ երազներ,
Շղարշ թևերով, լուսեղէն փայլով
Եկէ՛ք, լուռ եկէ՛ք, հոգուս փառսներ,
Կարդացէ՛ք աղօթք, տրտունջ մրմունջով:



ՍԻՐՈՒՄ ԵՄ

Դեռ սիրում եմ ճաճանչները, որ մեռան

Ալարփիի հուրհրատած շնչերում:

Հնչիւնները թրթռացին ու հանգան,

քո արծաթեայ ծիծաղների ծալքերում:

Այօթողի վեր առարած մրմունջներ,

Որ հեծում են մոմերի հետ - կերկերուն,

Ես սիրում եմ սակէ փոշի հեղ հասկեր

Երկնապայծառ քո յոյսերը երերուն:

Հեռուների թռիչքները երկնածին, »

Բոց աշերդ եթերային նուրբ նւազ.

Չող գիշերին սիրեցի ես վերտին՝

Իմ յոյսերի հանգրւանը, լոյս, միակ:

Յուլած սրտիս տանջանքները անաղօտ,

Որ շոյանքի թեով բերիլ, մոռացար.

Դեռ սիրում եմ երազանքը անձանօթ,

Չքեզ երազ ինձ մօտ էիր հեռացար:



ՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Մեղմ սօսափունով նոճիները հեղ օրօր երգեցին,
Ծաղիկներն անոյշ ղեփուրը շոյող սիրել յուշեցին
Լազուր կամարում լուսինը ոսկէ հէքիաթ է հիւսում,
Վախլուկ ու գունատ կոյս բիւս աստղերը վայելք են ժպտում:
Դիւթել են ուզում ինձ այլ բոլորը եւ սէր են երգում:

Սակայն բոլորին հոգիս անտարբեր լալիս է ծածուկ.
Ա՛խ ոսկէ հէքիաթ, ծաղիկներ քնքոյշ, անյուզ վազանցուկ,
Բոլորն էլ կանցնեն եւ շուտով կ'զայ մահաբեր աշուն՝
Հոգուս կտիրէ դեղնած, դալկացած մի Թախիժ Թարուն:

Յոյսերս լացող հանգիստ կօրօրեն ծաղկանց նազանքով
Մտքերս Թունոտ ցաւ երգ կհիւսեն արցունք տանջանքով:
Խօլ մրրիկների ահեղ ժամերին ոգիներն արքած
Մահւան մեղեդի կերգեն տխուր իմ հոգուն մարած:



Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Մ

Մոռացման սեւ, սոյն գիւտիւն,
Զեփիւռը նազանձով ծփում եր
Շոյելով սխաբեւ իմ հոգին,
Փսփսում անըզանք, երզանք?)

Աչերիդ նայեցի արցունքոս,
Յոյսի փայլ գտնելու խորհրում,
Հոգուս մեջ քրքուաց մի ակկորդ,
Երբ դու մեղմ երգեցիր Մոռացում:



Խ Ա Բ Ի Ա Ծ Ա Ս Ց Ի Ա Ծ Բ


I.

Վերջալոյսի բստորից յեա, ասողերն հեղիկ
փայլեցին,
Նւիրական վեհ տաճարի ջահերն իսկոյն
վառւեցին,
Եւ տաճարի գեղապատկեր կամարների շուքի
տակ,
Այստեղ, այնտեղ դէմքեր կային երգողների
նուրբ, յստակ:
Աստղկայ սէր պաշտողները հայեացքներով
մոգական,
Վահագնի սէրն էին ձօնում ասուածունու
գեղութեան:
Երաժշտական նուրբ դորմէրներ կար ամենքի
ձեռքերին
Պարում էին, երգեր հիւսում, գեղատեսիլ
Աստղկան:
Բուրումնաւէա ծխով արբած տաճար
մտաւ քրմունին.
Եւ կնդրուկի բուրով հոտը ձուլեց երգի
դողանջին:

Զօնը ձօնուեց... Համբոյրները մրմնջացին
միայաց,
Կամարների սուերի տակ ասուածուհին
մեղմ ժպտաց:

II.

Արևելքը շառագունուեց... Հրից ձուլւած
Վահագնը,
Գեղեցկութեան ասուածուհուն մօտեցաւ
լուռ, երկիրգած:
Ամենուրեք տիրեց յանկարծ խորհրդաւոր
լուսթիւն,
Երկրպագեց մինչև դետին: Օ՛ դարմանք
մի՛ նորութիւն...
Ասուածուհին զխտակագեղ, հուր հայեացքով
իր դաժան,
Մի անսրտշ շարժում գործեց ջահերն իսկոյն
մարեցան:
— Խաբւած ես դու... Քեզ ատել եմ խաբւած
ճնունդ եղէզին,
Ես սիրել եմ «Արև-Կրակի» նուրբ մարմնացում
գոռ Միհրին...




ՄԻ ԿԵԱՆՔ ԷՐ ՄԱՐԵՑ...

Փայլուն կացնի սուր հարուածների տակ, Նոճին
հառաչեց.
Կանաչ թաւիչից նոր ճնունդ առած մի կեանք էր
մարեց...

Եւ ջրերը ջրնջ, ուռան յուզեցին
Վճիռ արցունքով, անառն օծեցին.
Իսկ ծաղիկները տիրուհուն կարօտ,
Սուգի սև նշան հիւտեցին նարօտ:
Սրբուհու տեսքով նազան տխրութեամբ եկաւ
տեսութեան
Վառ արևելքի երազող Միտքը՝ թախծող
հեղութեան:

Յուզուած ջրերը ծագիկներէ հեա
Իրարու գրկած՝ փրփրեցին վէտ-վէտ:
Սիրոյ տենչերը երազ համբոյրով,
Փարուեցին նոճուն, մեղմիկ օրօրով:
Լազուր կամարով կարապը թուալ ցաւով
համակուած
Երգեց վշտալի մահուան մեղեդին ից
Նոճան մարած:
Եւ աստղերի պերճ լոյսով ողողուած,
Անտառի կողքին մի կոյս երեաց:
Թանամած նոճուն փոքեց գերեզման,
Երգեր մըմնջաց... Ա՛խ այդ էր նօրան...



ՍԵՄՅՈՒՆԻ ԼԱՄԵՐԳ

Նրան՝ ով այդ գիշեր հմայեց ինձ
Շոյանքի՛, վայելքի՛ մեղկ գիշեր, —
Կախարդիչ, հմայող մուգիկայ.
Ջութակի լարերը անզգայ,
Հոսում են մարգարտէ արցունքներ:

Մարմարէ սիւների շուքի տակ
Թնդում է սիմֆօնեան Չայկովսկու.
Անթառամ ժպիտը կուսական՝
Լուծում է Վազներեան չափի տակ:

Հիասքանչ նազը մե՛ղմ՛ լոեց.
Բռնկեց պերճ ծովը լոյսերի,
Ինձանում՝ արթնացան յոյսերի
Կայծերը՝ երբ բեմից՝ Նէ երգեց...

Երգեց մե՛ղմ, մելանոյշ ու յուզեց.
Մըմնջաց կարօտի նուրբ խօսքեր:
Չգեցի ծաղկունքի թարմ փնջեր,
Ծաղկանց մէջ հէգ հոգիս համբուրեց...

*
* *
*

Գաղտնիքի արցունքի սաւազան՝
Իմ հիանդ հոգին է այդ գիշեր.
Անցեալի մոռացման երազներ,
Հիւսեցին իմ հոգուն յաւիտեան...

ՀԱՐԵՄՈՒՄ

Արեւելքի շնորհ պարտիզում՝ կայ հոյակապ մի դղեակ,
Բիւր ապակեայ, բիւր գոյններից կշողայ լոյս արեգակ-
Եւ դղեակը մեղի հեշտութեան կրքի ծովում լողարով,
Պչրոտ կանանց նուրբ մարմինը, հիւրընկալում է սիրով...
Գանիլիաների ամայութեան անկիւնների մէջ լինի,
Մանկլաւիկներ են կանգնած, ապարոջները պլխին:
Իսկ քեօշկերում պատերի տակ «Շանդաղէներ» խմբովին,
Իրար զրկած վայելում են արեւելքի հին գինին,
Ծաղկանոցում շատրանից վճիտ ջրերը ցայտուն,
Մկրտում են ծաղիկների թերթիկները փայլփլուն.
Սոխակների դայլայիկը, զրախտ ու երգի մարմնացում:
Այս բոլորը կատարում են արեւելքի հարեմում:

Ե Ր Ե Կ Ո Յ

Շղարս ամպերի նուրբ կամարներից
Արեւի վերջին ցոլերը մարեց.
Անտառների մէջ թառուսի գրկից,
Նազան գեփիւռը երեկոն երգեց:

Կանաչ դառսերում հասկերը ոսկի,
Ջեփիւռի տոյոզ հերբը համբուրեց:
Փապաւէնի պէս երթը հաւերի
Ամպերի ծոցում խոյացաւ, սուգեց:

Իմ հոգու մէջ էլ, մի յոյս երեաց
Ա.դոս յոյսի պէս մեռնող, կերկերան.
Անուղ սիրոյ մէջ սիրսս հեկեկաց,
Արցունքով ցողեց երեկոն դժգոյն:

Ն Կ Ա Ր Չ Ի Ն

(Ս. Դովլաթեանի)

Խենթ ու խելառ ծովի փրփուրն ալեծուփ,
Կոյսի աշեր, դեղին հասկեր, ծառի թուփ.
Քո վրձինը բարձունքները հրացող,
Արևի փայլ, արցունք ու յոյս, լուսոյ շող,
Կոշտ կտաւին ուրւագծում է այսօր,
Իսկ վաղն արդէն նա պատրաստ է ու հօր:

Լուսաշաղի կայտառ հովը հովանի,
Անցած, դարձած քո օրերին հով կանի:
Հեռում կախարդ հորիզոնն է փայլփլում,
Կեանքիդ ուղին լուսաւորում ու ժպտում:




*
* *

Տանարների մեջ իմ հոգու լացող
Անող սիրոյ մութ, անուխ սանաւում,
Յերեկն է մեռնում դողդոջուն, հեծող
Կանարների սակ, սիւֆի ծալփերում:

Ամպերի սակից գիւտեր հասաւ
Ծիածանի նուրբ գոյներից հիւսած,
հոգուս սանաւի կանթերը հանկաւ,
Մութից արքնցան չարփեր մեռած:

Երկնային յուզիչ անուշ մեղեդին
Սգաւոր կոյսի հեծկհսանքի պէս,
Քրքռաց, հիւսեց մարւող աղօթիւն,
Սիրոյս ծաղկունքն է բօսնեց այնքան հեզ,



2072



Ն Օ Ր Ա

Նախերգանք

Մեզմ ու շոյող մի ոգի,
Հեղիկ կոյսի դալկադէմ
Երազ համբոյր աչերից,
Խլեց հուրր իմ կեանքի...

Ա. մաս

I.

Տառապանք, տանջանք և վշտի արցունք,
և՛ հոգու յուզում, և՛ սրտի թրթիւ,
և գունատ այտեր ու թախծոտ աչքունք,
մօտենում են ինձ, մեռնող, կերկերուն:
Այցի են գալիս դեփիւռի թևով,

ու սնարիս մօտ չոքում. միալար
արցունք է երգ-եր նրանք հիւսելով
օրօրում են ինձ, ու պարում խելառ:

Նուրբ ու քնքոյշ,

պարում ըզգոյշ.

թռչում պատին

ու իմ այտին,

քնքոյշ, մեղուշ

հեզ ու անուշ,

համբոյր տալի

մեղմ, հեշտալի:

Ծածկում կրկին

1001
3732



շողի տակին՝
պարում, հեռւմ,
սէր են տենչում:

Ու միշտ երգում են և՛ սէր և՛ տանջանք
դալկացած աշուն՝ բուրալից դարուն.
գարնան մէջ աշուն, սիրոյ՝ հառաչանք,
երազուն հոգիս լալիս է արիւն:

Մէկէլ յանկարծ,
որպէս շող, կայծ՝
դառնում տանջանք
խոր հառաչանք...

II

Նորից յուզում, անվերջ թրթիւ
հոգու, սրտի ու մտքի.
միշտ նոր տանջանք, միշտ նոր գրգիւ,
վերապրումներ անցեալի...
Եւ այսպէս միշտ, ամեն գիշեր
երբ կը հասնի մութ իրկուն,
շղարշ թևով կգան հիւրեր՝
թախիծ, տանջաք, տխրութիւն.
երազներէ հեքից ծնած,
մի չքնաղ կոյս հերարձակ.
բոցոտ աչերն հոգուս յառած
ինձ է կանչում ամօթախած.

սէր է տենչում, խօսք է հայցում,
փառք փսփսում ահանջիս,
սիրով արբած յոյս է երգում
ու փարում է նուրբ, կրծքիս:-
Վեր է կենում, որ հեռանայ
գաղտնի, կէսին գիշերի:
— Բայց անմենդ, չքնազ փէրի,
— Ինձ կա՛ չում են սուրբ Նօրա:

III

Ալպերի փերի՛, հմայող Նօրն
իմ բախտի անուրջ, թիթեռ գիշերւայ:
Նրբին մթնշաղ, իրիկւայ բոսոր,

պատմիր դու տեսմը հիւրերն երեկւայ.
լսեցիր գողարիկ սուտ հիւրինների
երգը՝ հառաչանք. սլարը՝ մի պատրանք:
մրմնջն երգը մեռնող յոյսերի
աղօթիր, «Մեղքը՛ իմ թշւառ կեանքի:
Պատասխան չկայ. լսաւարի ծոցում
սիրուց արբեցած, սիրտս է բաբախում:
Բ մաս.

IV

Իմ հոգին ի մի ձուլւած էր քեզ հետ,
անցեալ երազի կախարդ մի ժպտով,
երազ խօսքերից օրօր կարդալով

հոգիս քո գրկում, չքացար անյետ:
Սուգւեցիր լազուր յատակը ծովի,
սլացար վերև, ամպերից էլ վեր.
հոգիս մըմնջաց յոյսի աղօթքներ,
ցօղեց արցունքով վայելքն տանջանքի:
Բազմեցիր զահին ժպտուն աստղերի,
ապրեցիր սիրով պերճ հրեշտակների՝
թէ ալիքների սիրունին եղար
ծովերից-ծովեր շրջեցիր անցար:
Քո գաղանի այցը դաժան էր Նօրա,
նձան փոթորկոտ խենթ-խելառ ծովին
որի յորձանքներն իմ սուրբ Մաղօմնա,

պահում են թօշնած մի թշառ հոգի:

V

Երբ որ երեկոն եղաւ իրիկուն,
աստղերը մէկ-մէկ փայլեցին ժպտուն,
և հոգիները առան թաղցը քուն
անդորը նիրհեցին՝
երբ ծովի փերին, լուսինը՝ ըզգոյշ,
զեփիւռի թևին բազմած հեղանոյշ
ամպերի տակից հեզիկ լողալով
ողջունեց չորս դին, կախարդ ժպտով:
Մեղքի այդ գիւթող հեշտալի ժամին,
ուր փսիսում են աստղեր ու լուսին,

լազուր ջրերի հանդարտ ընթացքով
սահում էր նաւակ, յուշիկ օրօրւօյ:
Նաւակը դատարկ չունէր զեկավար,
փրփուր ջրերի բախտին յանձնւած
սահում էր մենակ:
Յանկարծ՝ նաւակը սուղեց յատակին,
իսկ նրա միջին՝ իմ թշւառ հոգին...

VI

Երեկոն դարձեալ
եղաւ իրիկուն:
գիշեր է լռին:
Աստղերի խաղին
անկողնում պառկած

յոյսերով մարած,
կ'ուզեկցէի լուս:
Մէկէլ աստղերի լոյսով ողողւած,
Ուղօննան փայլեց, Յիսուսին փարած:
Երկրպագեցի իմ սուրբ Նօրաին.
անհաս Նարձրունքի բարձած ախրունին.
ճակտի գանդուրին երկնային լոյսով,
անունս էր փայլում կոշտ, սև տառերով:
Թախժոտ մի հայեացք, նա իմ աչերին
սահեցրեց մեղմիկ, չբացաւ կրկին...

VII

Կանչում եմ ես ձեզ ծովերի ջրեր,

հմայիչ, գիւթող, լազուր կամարներ,
հայեաղքներ գամող, պստղեր փայլելուն
ֆէաներ ժպտուն:
Ձե՞ր մէջէ ապրում, հարսը էն քրքում
դրօշմած ճակտին, իմ թշւառ հոգի՞ն:
Այ՛ն, որ ծովերի ալիքների հիյա
փրփրում էր գոռում.
այն, որ երկնքի կոյս հրեշտակների
գեղգեղանքի հետ,
երգեր էր հիւսում:
Ահա, այն կոյսին, իմ սուրբ Նօրաին,
արդեօք չէ՞ք տեսել, կամ չէ՞ք կարդացել

ճակատին գրւած, կոշտ սև տառերով
անունս մեռած:
Եւ ջինջ աստղերը,
ծովի ջրերը
պատասխանեցին.
— Ձէ չէ պատանի,
հոգիդ թառամի.
քո հեքի Նօրան վաղուց է մեռել,
իսկ այս ամենը երազ ես տեսել:
Հեղիկ կոյսի դալկադէմ
երազ համբոյր աչերից,
մեղմ ու շոյող մի ոգի,
խլից հուրը իմ կիանքի...



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

2000

ԳԻՆՆ Է 70 Կ.

«Ազգային գրադարան



NL0357594

54395.